ՎԱՐԴԱՆԱՆՔ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Նախադպրոցական տարիքի երեխաների ստեղծագործական երևակայության զարգացումը կառուցողական գործորունեության միջոցով

Հաստատություն՝ Երևանի h 71 մսուր-մանկապարտեզ ՀՈԱԿ

Վերապատրաստվող՝ Մարինե Ավետիսյան

Վերապատրաստող՝ Լիանա Վերդյան

ԵՐԵՎԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ---------- 3

ՏԵՍԱԿԱՆՄԱՍ

ԳԼՈՒԽ 1. ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆՏԱՐԻՔԻԵՐԵԽԱՆԵՐԻՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆԵՐԵԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ

1.1.Երևակայության զարգացումը---------- 4

1.2.Խաղ-բեմականացումը, որպես նախադպրոցական տարիքի երեխաների ստեղծագործական երևակայության զարգացման միջոց---------- 6

ԳՈՐԾՆԱԿԱՆՄԱՍ

ԳԼՈՒԽ 2. ՓՈՐՁԱՐԱՐԱԿ ԱՆԱՇԽԱՏԱՆՔ ԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ և ԽԱՂ-ԲԵՄԱԿԱՆԱՑՈՒՄՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ

2.1.Հետազոտական աշխատանք---------- 12

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ---------- 15

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆՑԱՆԿ---------- 16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արդիականություն: Նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման ոլորտում կարևոր է առանձնացնել նրա խոսքը,ստեղծագործական երևակայությունը՝ կառուցողական գործունեության միջոցով, որի շնորհիվ նա կարող է ինքն իր խոսքով ստեղծագործել այս կամ այն գործողությունը, ծեսի ընթացքում: Բանավոր խոսքի զարգացումը օգնում է երեխաներին արտահայտելու և մեկնաբանելու իրենց մտքերը, զգացմունքները, գաղափարները, ինչպես նաև արձագանքելու ուրիշների գաղափարներին և գործողություններին: Բանավոր խոսքին տիրապետում են խոսելու միջոցով: Բանավոր խոսքի, հաղորդակցման լավագույն միջոցը զրույցն է: Զրույցի թեմա կարող է դառնալ երեխայի անձը: Երեխաների ստեղծագործական մտածողությունը կարելի է խթանել՝ ապահովելով այնպիսի ուսումնական միջավայր, որտեղ նրանք կարող են փորձել, սխալվել, շտկել: Սեփական անձի գիտակցումը և սեփական անձի դրական ընկալումը ձևավորվում է ուրիշների հետ շփումի իր դրական փորձառության արդյունքում:

Երևակայությունը “թաքնված” պատկերների կամ զգացողությունների ձևավորում է, որոնք տեղի են ունենում առանց որևէ մեկի իմացության: Անհատը կարող է երևակայել՝ ըստ տրամադրության, որը կարող է լավ կամ վատ լինել՝ կախված իրավիճակից: Որոշ մարդիկ երևակայում են, որպեսզի դուրս գան լարվածությունից կամ մռայլ տրամադրությունից: Այն ընդունված է համարել ներքին կարողություն և մտքում շրջակա միջավայրի ընկալման զգացումից բխած տարրերից մասնակի կամ ամբողջական անձնական ոլորտներ ստեղծելու գործընթաց:

Նպատակը: Երևակայության զարգացման առանձնահատկությունները նախադպրոցական տարիքում (կառուցողական գործունեության միջոցով):

Խնդիրները՝

1.Կատարել թեմայի վերաբերյալ տեսական վերլուծություն:

2.Ուսումնասիրել երևակայության զարգացման առանձնահատկությունները:

3.Կատարել հետազոտություն նախադպրոցական տարիքի երեխաների շրջանակում:

ԳԼՈՒԽ 1. ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԵՐԵԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ

1.1.Կառուցողական երևակայության զարգացումը

Կառուցողական անվանումը ծագել է լատիներեն “costruction” բառից, որը նշանակում կառույց։Կառուցողական աշխատանքները նախադպրոցական տարիքում ենթադրում են՝ գործունեություն, որի ընթացքում ստեղծվում են տարբեր նյութերից (մանկական շինություն կոնստրուկտոր, թուղթ ստվարաթուղթ, բնական նյութեր և այլն) բազմազան խաղային շինություններ։

Երեխայի կառուցողական գործունեությունը անչափ մոտ է մեծահասակի գեղարվեստատեխնիկական գործունեությանը։Չնայած մանկական շինությունները չունեն հասարակական նշանակություն, և երեխան չի կարող կատարել նորարարություն, սակայն գործունեության այս ձևը հսկայական նշանակություն ունի երեխայի աշխատանքային դաստիարակության վրա։

Կառուցողական գործունեությունը նախադպրոցական տարիքում կրում է **դերային խաղի,խաղ-բեմականացման**բնույթ. կառույցը ստեղծելու ընթացքում երեխաները ներգրավվում են խաղային հարաբերությունների մեջ։ Դրանք ոչ միայն բաժանում են յուրաքանչյուրի պարտականությունները այլև կատարում այս կամ այն դերը այդ իսկ պատճառով կառուցողական գործունեությունն անվանվում է **շինարարական** խաղ։

Շինարարական նյութերից կառուցումները նախադպրոցականների՝ հատկապես վաղ տարիքի երեխաների համար ամենամատչելին են։ Այդ նյութի դետալները բաղկացած են երկրաչափական մարմիններից՝ խորանարդ, գլան, բուրգ և այլն։ Դրանց ճշգրիտ ձևը երեխային հնարավորություն է տալիս հեշտությամբ ստանալ կայուն կառույց։

Ստեղծագործական երևակայությունը, անկախ լինելով արտաքին սահմանափակումներից, հաճախ իրական հաճույքի և ավելորդ տառապանքի միջոց է ։Առաջնորդվելով այս գաղափարով, հաճելի և սարսափելի երևույթներ երևակայելը միմյանց է կապում էմոցիոնալ օղակներ, որոնք ներառված են էմոցիոնալ ընկալման և փորձի մեջ։

Նմանատիպ վարկած կա, որ մարդկային ճանաչողության ամբողջության հիմքում ընկած է երևակայությունը։

Կառուցողական խաղերը զարգացնում են երեխայի՝ուշադրությունը, հիշողությունը, երևակայությունը, ստեղծագործելու կարողությունը, հաղորդակցման (կոմունիկատիվ) կարողությունը, շարժողականությունը, ակտիվությունը, վարքի կամածինությունը, ընկալումը, շոշափելու, այսինքն՝ նյութիթե՛ ընտրության և թե՛ մատուցման ձևը պիտի լինի հնարավորին չափ միակը, լավագույնը։

Երկարժամանակ «երևակայություն» ու «ֆանտազիա» բառերը փիլիսոփայության պատմության բացառիկ մենաշնորհն էին։ Հոգեբանության մասին միայն մի քանի տասնամյակ են սկսել զբաղվել, և դրա հետևանքով է որ դպրոցներում երևակայությունը «աղքատ» մնացել։ Ուշադրությանն ու մտապահելուն ավելի մեծ նախապատվություն է տրվել և տրվում։

Միայն 18-րդ դարի սկզբում ենք հանդիպում տպավորությունների մտովի վերարտադրում «facultas fingendi»-ից (լատ. երևակայելու հատկությունից) տարբերելու առաջին փորձին, երևակայելու կարողության սկզբնական տպավորությունների վերլուծության և հա մադրության միջոցով միանգամայն նոր կառույցների ստեղծմումն է։

Երևակայության և ֆանտազիայի միջև տարբերության վերջնական ձևակերպման համար պարտական ենք Հեգելին։ Նրա կարծիքով թե՛ երևակայությունը, թե՛ ֆանտազիան ուղեղի հատկության էությունն են, սակայն նրանց տարբերությունը այն է, որ երևակայությամբ օժտված ուղեղը ուղղակի վերարտադրում է, իսկ ֆանտազիայով օժտվածը՝ ստեղծագործում։ Երևակայությունը սահմանազատվում է իրականի միջոցով և նրա հիման վրա է կառուցվում, իսկ ստեղծագործաբար երևակայելը՝ «ինչքան ուժ ունի ոտքերում փախչում է առաջինից»։

Զոլանոչ թե երևակայությանը, այլ հենց ստեղծագործաբար երևակայելուն է վերագրում նորագույն ու արդիական արվեստի մեծագույն մասը։ Եդուարդ Թաուբերնու Մորիս Գրինն իրենց սինչ տրամաբանական փորձում ապացուցում է, որ հենց այնպես հաճույքի համար ստեղծագործաբար երևակայել չարժե. դա, որպես կանոն, մարդու ամենա նվիրական կետին է ուղղվում, ուստի անգամ նմանափոքրիկ սողանցքը կարող է պիտանի լինել։

Խաղը ոչ թե ապրած տպավորությունների մասին հիշողություն է, այլ մարդկանց ստեղծագործական վերամշակումը, որի ընթացքում երեխան փորձի տվյալներն է իմի բերում, որպեսզի իր հետաքրքրություններին ու պահանջմունքներին համապատասխանող նոր իրողություն ստեղծի:

Բանականությունը անբաժանելի է: Դրաս տեղծագործական կարողությունները համակողմանիորեն պետք է զարգանան:

Ստեղծագործական մտածողությունն ակտիվ, պրպտող մտածողությունն է, որը պրոբլեմներ է տեսնում այնտեղ, որտեղ ուրիշների կարծիքով ամեն ինչ իր պատրաստի պատասխանն ունի, փոփոխվող իրադրության մեջ, այնտեղ, որտեղ ուրիշների աչքին վտանգներ են երևում, այն իրեն զգում է ինչպես ձուկը ջրում. Այն իվիճակի է ոչ ոքից կախում չունեցող, ինքնուրույն որոշումներ ընդունելու, հերքում է իր վզին փաթաթվողը, իրերի ու հասկացությունների հետ նորովի է աշխատում՝ ոչ մի համակերպողական նպատակով իրեն խաճել թույլ չտալով:

1.2.Խաղ-բեմականացումը, որպես նախադպրոցական տարիքի երեխաների ստեղծագործականներևակայության զարգացման միջոց

Խաղ-բեմականացումներում երեխա-դերասանը ինքնուրույն ստեղծում է կերպար արտահայտչականության միջոցների համակարգի օգնությամբ (ինտոնացիա, դիմախաղ, մնջախաղ): Խաղ-բեմականացումների ժամանակ երեխան կատարում է ինչ-որ սյուժե (կառուցողական նյութերով), որի սցենարը արդեն գոյություն ունի, սակայն չի հանդիսանում կոշտ կանոն, այլ ծառայում է կտավ, որի սահմաններում զարգանում է իմպրովիզացիան: Իմպրովիզացիան կարող է վերաբերել ոչ միայն տեքստին, այլ նաև սցենարի գործունեությանը:

Խաղ-բեմականացումները կարող են իրականացվել առանց հանդիսատեղի և կրում են համերգային կատարման բնույթ: Եթե նրանք բեմադրում են սովորական թատերական ձևով (բեմ, վարագույր, դեկորացիաներ, կոստյումներ և այլն) կամ զանգվածային սյուժետային տեսարան, ապա դրանք անվանում են թատերականացված:

Դրամատիզացիաների տեսակները.

- խաղ-իմիտացիաներ՝կենդանիների, մարդկանց, գրականկերպատներիտեսքով
- տեքստերի հիման վրա դերային երկխոսություններ
- ստեղծագործությունների բեմականացում
- ներկայացման բեմադրում մեկ կամ մի քանի ստեղծագործություններով
- խաղ-իմպրովիզացիաներ առանց նախապատրաստման:

Դրամատիզացի այն հիմնվում է կատարողի գործողությունների վրա, ով կարող է օգտագործել նաև տիկնիկ, կառուցողական նյութի դետալ (խորանարդ, բուրգ և այլն):

Լ. Վ. Արտեմովան առանձնացնում է ավագ նախադպրոցական տարիքի երեխաների խաղ-բեմականացման մի քանի տեսակներ.

- ✓ Խաղ-բեմականացում մատերի օգնությամբ: Երեխայի ատրիբուտները լինում են մատերի վրա: Նա «խաղում է» մի կերպարի համար, որի պատկերումը գտնվում է ձեռքի վրա:
- ✓ Խաղ-բեմականացումներ տիկնիկ բիբաբոյի հետ: Այս խաղերում ձեռքի մատերի վրա հագցնում են տիկնիկ բիբաբո: Նրանք սովորաբար

գործողությունները կատարում է շիրմայի վրա, որի հետևում կանգնած է կատարողը: Այսպիսի տիկնիկները կարելի է պատրաստել ինքնուրույն, օգտագործելով հին խաղալիքները:

- ✓ Իմպրովիզացիա: Սա սյուժետի ներկայացում է առանց նախապատրաստման:

Ստեղծագործականկարողություններիզարգացմանաշխատանքիհամակարգըկարելիէբաժանել 3 փուլերի.

1. գրական և ժողովրդական ստեղծագործությունների գեղարվեստական դաստիարակություն
2. հատուկ կարողությունների յուրացում՝ հիմնական («դերասան», «ռեժիսոր») և երկրորդական դիրքերի («սցենարիստ», «ձևավորող», «հագուստի մոդելավորող»)
3. ինքնուրույն ստեղծագործական գործունեություն:

Դերային խաղերը հասարակության հետ պրոեկտման վերաբերմունք են: Հասակակիցների դերային խաղերը օգնում են կառուցել հարաբերություններ ընկերների հետ, պաշտպանել սեփական հետաքրքրությունները և հաշվի առնել այլ մարդկանց ցանկությունները: Խաղի մեջփոքրիկըձեռքէբերումիմտություններ, որոնքպետքկգանուսումնականգործընթացում:

Ինչքան երեխայի հայացքներն են փոխվում, այնքան էլ փոխվում է խաղի սյուժեն: Երեխաների համար դերային խաղերն ունեն ավանդական սյուժետ՝ խանութ, հիվանդանոց, դպրոց,որոնց ժամանակ երեխաները օգտագործում են կառուցողական նյութեր (կոնստրուկտորներ):

Նման խաղեր խաղում են բոլոր սերունդները՝ ավելացնելովնրանց տարբեր բովանդակություններ: Խաղի բովանդակության վերաբերմունքը փոխանցվում է մասնակիցներին:

Կառուցումների ընթացքում զարգանում է միմյանց հետ շփվելու, հաղորդակցվելու կարողություն: Երեխաները ձգտում են աշխատել

ինքնուրույն և համբերատեր: Նրանց մեջ մշակվում է կառուցողական և շինարարական նյութերը քանդելու, ճիշտ տեղում դասավորելու, տարածքը կոկիկ հավաքելու կարողություն

Ոչ բոլոր երեխաները հակվածություն ունեն դեպի դերային խաղ: Ամաչկոտ, քաշվող փոքրիկները հաճախ նախընտրում են սպորտային խաղեր, կամ մենակություն համակարգչի դիմաց: Չի կարելի թերագնահատել դերային խաղերի ներդրումը երեխայի զարգացման գործում: Եթե երեխան ամաչկոտ է, կարելի է երեխային գրավել դեպի խաղը՝ այն վերածելով թաթերական ներկայացման: Կախարդական հեքիաթները, որոնք սիրում են երեխաները, կօգնեն պատրաստել վարքի ճիշտ հմտությունների, յուրաքանչյուր տնային աշխատանք կարելի է ուղեկցել խաղով: Երեխային խաղի մեջ ներգրավելուն միտված այդ բոլոր միջոցներն ունեն մեկ նպատակ՝ դաստիարակել ներդաշնակ զարգացած, հաջողված անձնավորություն:

Երեխան խաղում է մի շարք զգացմունքներին համապատասխան:Դերախաղը հարստացնում է երեխայի զգացմունքները և զգայարանները:Երեխան կարող է հիշել ամիսներ առաջ տեղի ունեցած հաճելի մի իրադարձություն և խաղալ այդ իրավիճակը տիկնիկի հետ:

Դերախաղը ծանոթանալու, շփվելու, ընկերանալու միջոց է:

Սա ձեռք բերած գիտելիքների կամ փորձի հարստացման միջոց է: Կատարելով որևէ դեր՝ երեխան ձգտում է՝ ըստ համապատասխան իրավիճակի դրսևորել այն և հասցնել ավարտին: Դերախաղը մասնակիցներին հնարավորություն է տալիս բացահայտել իրենց ընդունակությունները: Անհրաժեշտ է ընտրել խաղի համար բազմաբովանդակ և հետաքրքրաշարժ թեմատիկա՝

- <<Խանութ>>
- <<Շտապ օգնություն>>
- <<Բժիշկ-բժիշկ>>
- <<Ընտանիք>>
- <<Մանկապարտեզ>>
- <<Տոնավաճառ>>
- <<Շուկա>>
- <<Շին հրապարակում>>:

Այդ կերպ հնարավոր է լինում իրականացնել տարբեր դերեր: Այստեղ կարևորվում են համապատասխան մթնոլորտի ստեղծում և մասնակիցների անկաշկանդ վարքագծի ապահովումը: Դերախաղերը կարող են ունենալ հստակ կառուցվածք կամ լինել ազատ: Այն օգտակար է, երբ փորձում են ցույց տալ, որ նույն թեմայի շուրջ տարբեր մարդիկ տարբեր կառուցվածք ունեն: Դերախաղի գրագետ իրականացումն անգնահատելի օգուտ է բերում մասնակիցներին: Դրանք ցանկալի է անցկացնել պարապմունքի մեջտեղում: Մեթոդը պետք է կիրառել շատ զգույշ: Ցանկալի է, որ խմբերը լինեն փոքր: Եթե մի խումբը խաղում է մյուս լինում է դիտորդ: Դերախաղը մասնակիցներին հնարավորություն է տալիս հասկանալ, թե ինչպես են իրենց զգում այլ մարդիկ, երբ առնչվում են ինչ-ինչ իրավիճակների հետ: Դերային խաղը երեխայի համար սիրելի, զվարճալի, հետաքրքիր խաղ է, որը զարգացնում է նրա խոսքը, ստեղծագործական ունակությունները, ինքնուրույնությունը, խմբով խաղալու-աշխատելու հմտությունները: Դերախաղի էական նշանակությունը այն է, որ երեխան հայտնվում է ուրիշ մարդու դիրքում և կարծես աշխարհին նայում է այն մեծահասակի տեսանկյունից, որի դերը կատարում է: Երեխայի ստեղծագործական երևակայությունը զարգանում է հատկապես ստեղծագործական, դերային խաղերի միջոցով, որոնց ընթացքում երեխան կարող է օգտագործել կառուցողական նյութեր:

Երեխան հավատում է իր հորինած կերպարին: Նա ոչ միայն հավատում է, այլև ինքն է կատարում այդ դերերը: Մտնելով կերպարի մեջ՝ երեխան դառնում է նա, ում ընդօրինակում է: Դերախաղը հիմնականում խմբային է, մասնակցում են մի քանի երեխաներ, որոնցից յուրաքանչյուրը կատարում է իր դերը: Այսպես խաղում ձևավորվում են երկար, շղթայաձև փոխկապակցված խաղային խմբեր, օրինակ՝ աշխատում է հիվանդանոցային համալիրը, բժիշկները զննում են հիվանդներին, վիրաբույժը վիրահատում է ատամնաբույժը բուժում է ատամները, շտապօգնության մեքենան հրդեհից այրվածներին հասցնում է հիվանդանոց, հիվանդանոցի կողքին

այրվում է բնակելի շենք, այնտեղ են շտապում հրշեջ մեքենաները և այլն: Դերային խաղերը ժամանցային բնույթի խաղեր են: Նախադպրոցական տարիքը կարևոր ժամանակահատված է երեխայի համար, այդ ժամանակ հիմք են դրվում անձի զարգացման ուղիները, կամքը և վարքի դրսևորումները, ակտիվորեն զարգանում է երևակայությունը, ստեղծգործելու ունակությունը:

Երեխաները սկսել են շատ քիչ խաղալ և դա բացատրվում է ժամանակի ոչ բավարար լինելով:

Մանկական խաղը մշակվել է հոգեբանության կողմից և համարվում է ամենակարևոր գործընթացը երեխայի կյանքում, հատկապես նախադպրոցականի կյանքում:

Խաղ-բեմականացումը հնարավորություն է տալիս երեխային ներկայանալու, արտահայտվելու, դառնալու ավելի անմիջական և շփվող: Դերային խաղերից ծնվում են թատերական ներկայացումներ:

Երեխաները հանպատրաստից կարող են ներկայացումներ խաղալ, անհրաժեշտ բեմական միջոցները կարող են հենց տեղում պատրաստել՝ ներկայացնել և ներկայանալ կենդանի ձևով:

Մատների վարժությունները խթանում են երեխայի ճանաչողական ակտիվությունը, օգնում են նրան ամբողջական պատկերացում կազմել շրջապատող աշխարհի մասին:

Երեխան մտածում է մատների, ձեռքի շարժումների օգնությամբ և միջոցով, յուրացնելով այդ վարժությունները՝ երեխաները կարող են պատմել զանազան պատմություններ ձեռքերի օգնությամբ:

Ձեռքերի միջոցով պատմելն օգնում է երեխաների երևակայության զարգացմանը: Մատիկների վարժանքը շատ անհրաժեշտ է հատկապես փոքրիկների՝ նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքի երեխաներ համար: «Մատների թատրոնում» մատները դառնում են փոքրիկ դերասաններ և օգնում են երեխաներին մտնել դերի մեջ, խթանել նրանց երևակայությունը, օգնել տեսնել հերոսներին «ներսից»՝ մտնելով կերպարի մեջ: Երեխաների համար շատ հետաքրքիր կլինի, եթե փոքրիկ բեմականացումներն իրենք ներկայացնեն: Բացի գեղագիտական դաստիարակությունից, այդպիսի ներկայացումը կարող է նպաստել երեխաների

խոսքի զարգացմանը: Այն հնարավորություն է տալիս փոքրիկներին դառնալ ավելի արտիստիկ, ներկայացնել այն սեփական ընկալման տեսանկյունից: Այս ամենը նպաստում է երեխաների բազմակողմանի զարգացմանը:

Այն օգնում է մանկավարժական դասընթացը դարձնել առավել կենդանի, հետաքրքիր և արդյունավետ:

Գլուխ 2. Փորձարարական աշխատանք կառուցողական գործունեության և խաղ-բեմականացումներիմիջոցով

2.1.Հետազոտական աշխատանք

Խաղ բեմականացում

Նախադպրոցական տարիքում կառուցողական աշխատանքները միահյուսվում են սյուժետային խաղին, խաղ-բեմականացմանը և հանդես են գալիս որպես միջոց և բաղադրիչ: Խաղը հանդիսանում է որպես շարժառիթ՝ պարզ կառուցումներ կատարելու համար, դրա հետևանքով կառուցողական աշխատանքները համարվում են սյուժետային և խաղ-բեմականացման կոմպոզիցիաներ: Կառուցողական աշխատանքները ուղղորդվում են դաստիարակի հրահանգով որոնք երեխան պետք է լսի և կատարի: Խաղը հետաքրքիր կազմակերպելու համար կարող են ավելացվել շինության չափերին համապատասխան խաղալիքներ՝ տիկնիկներ, մեքենաներ և այլն: Այսպիսով ձևավորվում է հետաքրքրությունը կառուցողական նյութերով խաղային գործունեության նկատմամբ:

Դաստիարակը երեխաների հետ միասին որոշում է պատրաստել խաղ բեմականացում: Նախ երեխաներն ընտրեցին հեքիաթը, <<Պապն ու շաղգամը>>, որի հիման վրա պետք է պատրաստվի խաղ բեմականացումը: Դաստիարակը նրանց համար կարդում է հեքիաթը, հետո միասին քննարկում են այն: Երեխաները վերարտադրում են իրենց զգացմունքները:Դաստիարակի և երեխաների հարց ու պատասխանի միջոցով քննարկվում է՝ արդյոք հերոսները ընկերասեր էին և միասնական,իսկ եթե մկնիկը չգար ինչ կլիներ, իսկ եթե դու լինեիր նրա փոխարեն ինչպես կվարվեիր: Դաստիարակը փորձում է երեխաներին ներգրավել հեքիաթի մեջ: Այնուհետև երեխաները իրենք են ընտրում հեքիաթի հերոսին, որին ցանկանում են մարմնավորել: Դերերը բաշխելուց հետո փորձում են դերային խաղով ներկայացնել հեքիաթը: Ասպիսով, հեքիաթն ամրապնդվելուց հետո պատրաստվում ենք խաղ բեմականացմանը:

Երեխաները դաստիրակի օգնությամբ կատարում են կառուցողական բնույթի աշխատանք՝ պատրաստելով բեմանականցման միջավայրը կառուցողական նյութերի օգնությամբ:

Մենք ընտրեցինք 3-4 տարեկան երեխաների խումբը: Ամեն ինչ այնպես էր ինչպես իրական թատրոնում: «Մեծերը» մեծ պատասխանատվությամբ ցուցադրեցին իրենց ներկայացումը, իսկ փոքրիկները մեծ խանդավառությամբ դիմավորոցին նրանց: Այս նախագիծն իրականացնելով մենք կարողացանք լուծել մի շարք խնդիրներ, որոնց մասին կխոսենք ստորև:

Դերասան-երեխաները ցուցադրելով թատրոն, իրենց զգում են հասարակության լիիրավ անդամ, կատարելով շատ կարևոր գործ: Երեխաների մոտ արթնանում է պատասխանատվության և պարտաճանաչության զգացում, ցուցաբերելով գործին լուրջ վերաբերմունք: Փորձերի ընթացքում երեխաների մոտ ձևավորվում է փոխզիջման և փոխըմբռման հատկանիշներ:

Փոքրիկ դերասանները սովորում են հստակ արտաբերել բառերը, կառավարել իրենց ձայնը, խոսքի տեմպը, յուրաքանչյուր դերին տալիս են բնավորությանը բնորոշ ձայն: Զարգանում է փոքրիկ դերասանների երաժշտական տակտը, ռիթմը, ծանոթանում են երաժշտական ժանրերի հետ:

Ներկայացման միջոցով երեխաները հարստացնում են իրենց տպավորությունները, առաջանում են դրական հույզեր: Ցույց տալով օրինակներ երեխաների մեջ ձևավորվում է ընկերասիրություն, բարություն, անկեղծություն, սեր, աշխատասիրություն: Դերասան- երեխաները սովորում են ժեստերը, մարմնի լեզուն, օրինակ՝ որպեսզի ցույց տա նապաստակի ուրախությունը՝ նա թռչկոտում է, վախի ժամանակ՝ դողացնում է և այլն:

Երեխաների մոտ զարգանում է կոլեկտիվում աշխատելու ունակությունները և դրսևորվում է համբերատարություն կոլեկտիվի անդամների նկատմամբ:

Թատրոնը երեխաների մեջ դաստիարակում է բարոյական և գեղագիտական հատկանիշներ, ընդլայնվում է երեխաների ճանաչողական աշխարհընկալումը:

Հանդիսատես երեխանրի մոտ առաջանում է ցանկություն ընդգրկվել դերասանական կազմի մեջ, և ներկայացումից հետո նրանք խաղում են թատրոն փորձելով ընդօրինակել դերասաններին:

Թեմա՝

<<Պապն ու շաղգամը>>

Նպատակները՝

Կրթական՝

Ձևավորել գիտելիքներ միասնականության և ընկերասիրության մասին:

Ամրապնդել գիտելիքները աշխատասիրության վերաբերյալ:

Դաստիարակչական՝

Դաստիարակել բարի և դրական վերաբերմունք միմյանց և մեծերին օգնելու նկատմամբ:

Զարգացնող՝

Շարժումները միաժամանակ կատարելու կարողություն

Կապակցված խոսքի զարգացում

Ճիշտ շնչելու ունակություն

Շարժողական վոլորտ՝ Չափորոշիչ 1. Ցուցիչ 1.2.

Խոսքի զարգացում և հաղորդակցման ոլորտ՝ Չափորոշիչ 2.Ցուցիչ2.4.

Իմացական ոլորտ՝Չափորոշիչ 17. Ցուցիչ17.1

Մատնայինթատրոնիցուցադրությունըկազմակերպեցիերկուսից-չորստարեկաններիիմբում: Երեխաները, մատնային թատրոնի ցուցադրմամբ, դիտեցին և ունկնդրեցին «Պապն ու շաղգամը» հեքիաթը: Սովորեցին լինել աշխատասեր, հասկացան հիմնական գաղափարը՝ ցանկացած աշխատանք ավելի հեշտ է լինում, երբ այն կատարումես ընկերներիդ հետ:

<<Պապնուշաղգամը>>մատնային թատրոն:

Եզրակացություն

Եվայսպես ուսումնասիրելով մասնագիտական գրականությունը, կատարելով փորձարկումները, եկանք հետևյալ եզրահանգումների՝

1) Նախադպրոցական տարիքի երեխայի կյանքում կարևոր տեղ են գրավում խաղերը՝

- Դերախաղը հաճելի, զվարճալի և ուսանելի պետք է լինի
- Դերախաղը կարող է լինել ինքնաբուխ
- Սահմանափակումներ չպետք է լինեն, որպեսզի երեխան չձանձրանա
- Դերային խաղերի կիրառությունը զարգացնում է երեխաների միջև միջանձնային հարաբերություններ
- Ակտիվորեն զարգանում է երեխայի ստեղծականությունը և երևակայությունը
- Խաղը երեխայի կյանքի զարգացման գործոնն է
- Դերային խաղը դաստիարակության և կրթության զարգացման միջոցն է, որը ձևավորում է երեխայի անհատականությունը
- Դերային խաղերը անհրաժեշտ են երեխաներին, այլապես նրանք կմեծանան բարդույթավորված, սեփական կարծիքից զուրկ, ագրեսիվ
- Մանկական խաղը մշակվել է հոգեբանության կողմից և համարվում է ամենակարևոր գործընթացը երեխայի կյանքում, հատկապես նախադպրոցականի կյանքում
- Մատների վարժությունները զարգացնում են երեխաների երևակայությունը: Մատիկների վարժանքը շատ անհրաժեշտ է հատկապես փոքրիկների՝ նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքի երեխաների համար: Մատների օգնությամբ պատմություն պատմելու թերևս մեր առաջին փորձն այն էր, որ պարզեցինք, թե ինչի՞են ընդունակ մեր մատները:

Որոնք իրականացվում են կառուցողական գործունեության միջոցով՝

- Կառուցել միջին բարդության շինություններ:
- Կատառել պարզ գործողություններ՝ մանր առարկաներով:
- Զնափոխել կառույցը երկու ծանոթ եղանակով:
- Հավաքել 3-4 խոշոր մասերից բաղկացածպատկեր:

Օգտագործված գրականության ցանկ

1. «Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ» Ձեռնարկ մանկավարժների և ուսանողների համարՍ. Տ. Վարդումյան Նոյյան Տապան 2005թ
2. «Հրաշք մատիկները՝ ուսումնամեթոդական ձեռնարկ մանկավարժների և մանկապարտեզի դաստիարակների համար» Անտարես Սիրամարգ Վարդումյան 2007 թ.
3. Акулова О. Театрализованные игры // Дошкольное воспитание, 2005
4. Антипина Е.А. Театрализованная деятельность в детском саду.-М., 2003
5. Артемова Л. В. Театрализованные игры дошкольников.— М., 2010
6. Буренина А.И. Театр всевозможного. Санкт-Петербург,. 2002